ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ

ՀԱՐԳԱՆՔԻ ՄԱՏՈՒՑՈՒՄ ՀԱՅՈՑ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ

Հարգանքը սրբությունների ու արժեքների նկատմամբ՝ հարգանք է ստեղծում նախ և առաջ հարգանք մատուցողին:

Եվ այդ հարգանքի ու խոնարհումի մատուցման մեջ է, որ յուրաքանչյուրը ձևավորվում է իբրև մարդ, իբրև «ըստ պատկերի և նմանութեան» Աստծու էակ:

Այս ճշմարիտ հասկացության հետևողությամբ, սույն թվականի հուլիսի 5-ին, շաբաթ օրը, երկնասլաց Արարատի հայացքի ներքո, Խոր Վիրապի պատմական վանքում հանդիսավորապես տոնախմբվեց Ս. Գրիգոր Լուսավորչի Վիրապից ելնելու հիշատակը:

Յուրաքանչյուր հայ քրիստոնյայի համար հոգեհարազատ այս ոգեկոչումը փաստորեն հարգանքի մատուցումն է Գրիգոր Լուսավորչի անձի միջով 14 տարիներ խավար ու թունավոր սողուններով լեցուն խոր վիրապում բանտարկված քրիստոնեության:

Լուսավորչի Վիրապից ելնելու օրը քրիստոնեության ազատագրումն է Հայոց Աշխարհում:

Ի հարգանս երանաշնորհ ու առաքելաշավիղ Հայրապետի, մատուցվեց Ս. Պատարագ: Պատարագիչն էր Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը:

Պատարագին ներկա էին Գարեգին արքեպս. Ներսիսյանը, Արսեն արքեպս. Բերբերյանը, Վազգեն վրդ. Սիրզախանյանը, Խոր Վիրապի վանքի միաբան քահանաները և Ս. Էջմիածնի Գևորգայն Հոգևոր ճեմարանի Ա-Գ լսարանների սաները: Ս. Սեղանին սպասավորեց Մակար աբղ. Հովհաննիսյանը: Պատարագիչ Արբազանը հավուր պատշաճի քարոզ խոսեց /տե՛ս էջ 75/, որից հետո Լուսավորչի Ս. Աջը թափորով դուրս բերվեց Վանքի բակ, որտեղ հոգևորականաց դասը Անդաստանի կարգ կատարեց՝ Կաթողիկոսական Ընդհանուր Փոխանորդ Գարեգին արքեպս. Ներսիսյանի նախագահությամբ: Հավատացյալ ժողովուրդը, որի մեջ կային խմբեր Էջմիածնից, Արմավիրից, Երևանից և Խոր Վիրապի շրջակա բնակավայրերից, ևս մասնակցեցին թափորին և Անդաստանին՝ բարձրաձայն ձայնակցելով երգվող շարականներին ու երգերին: Անդաստանից հետո Վեհափառ Հայրապետի օրհնությունները հավատացյալներին փոխանցեց Գարեգին Արբազանը, որն այնուհետև ներկաներին հրավիրեց աղոթքներով Լուսավորչի բարեխոսությունը խնդրելու՝ Վեհափառ Տիրոջ առողջության համար: Վերջում ներկաները մեկ առ մեկ համբուրեցին Ս. Աջը, որով և Պատարագի հաղորդությունն իր կատարյալ լրումը ստացավ: